# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«04» հունիսի 2025թ. ՈՄՈ/558-Ա

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԿԵՍԱՐԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալի 2025 թվականի հունիսի 2-ի N Ե//1597-25 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

***որոշում եմ՝***

1. Մինչև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր դպրոցական շենքի կառուցման աշխատանքների ավարտը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախակրթարանի և 1-12-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերի բնականոն ուսուցման աշխատանքների կազմակերպումն իրականացնել 2-րդ հերթով «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենավան բնակավայրի 20-րդ փողոց շենք 1-ին հասցեում գտնվող դպրոցում:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, Դ.Ավետիսյան և Ա.Հակոբյան)՝ ապահովել սույն որոշման պահանջների կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող Ս.Հովհաննիսյանին, «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Գ.Պապոյանին, «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ս.Պողոսյանին, «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» և «Շենավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Գ. Պապոյանին և «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Ս.Պողոսյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 21-րդ կետով սահմանված ուղևորափոխադրման ծառայության ձեռք բերումը՝ պայմանով, որ այդ ծառայությունից պետք է պարտադիր կարգով օգտվեն շահառուներ հանդիսացող «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական աշխատողները և սովորողները:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական՝ Մանվել Մելիքյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-06-04 17:27:42 GMT+4
Հավաստված է ԷԿԵՀ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ